ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՖՂԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX ԴԱՐՈՒՄ (ԷԹՆԻԿ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ)

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ

Էլ. հասցե՝ vladimir.pogosyan@ysu.am

DOI: 10.24234/scientific.v2i47.160

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից Աֆղանստանում էթնիկ և կանանց հիմնախնդիրները հանդիսանում են հասարակության կերպափոխությունների որոշակիացման ցուցիչներ և հնարավորություն են տալիս պատկերելու հարաբերությունների և հնարավոր լուծումների տեսլականը, որը համարժեք կլիներ հասարակական հարաբերությունների ներկա համաշխարհային ստանդարտներին:

Հոդվածը նվիրված է աֆղանական հասարակության էթնիկ և կանանց հիմնախնդիրների ուսումնասիրությանը, որտեղ փորձել են համապարփակ հետազոտության ենթարկել XX դարում տեղի ունեցած գլոբալ գործընթացների ուղղակի և անուղղակի ազդեցությունն աֆղանական հասարակության այս երկու հիմնախնդիրների վրա:

Հետազոտության օբյեկտն է աֆղանական հասարակությունը, իսկ առարկան՝ էթնո-քաղաքական և կանանց հիմնախնդիրները՝ XX դարի արտաքին և ներքին բազմաչափ գործընթացների համատեքստում: Ուսումնասիրության նպատակն է աֆղանական հասարակության կերպափոխություններն ուրվագծել էթնիկ և կանանց հիմնախնդիրների ենթախորքին և ցույց տալ վերջիններս ազդեցությունը հանրային միջավայրի գործընթացների վրա:

Հոդվածում համապարփակ քննության են ենթարկված Աֆղանստանի «ազգային առաձնահատկությունները», կլանային և միջցեղային հարաբերությունների պրիզման, արտաքին դերակատարների ազդեցությունը էթնիկ գործընթացների, կրոնա-ազգային միջավայրի կերպափոխության, ազգային փոքրամասնությունների ինքնութեանական միտվածությունն ու այլ հիմնահարցեր: Դիտարկված է կանանց դերակատարումը Աֆղանստանում, նրանց հասարակական ինտեգրման, հանրային աշխատանքում ներառման, բարձրագույն կրթության իրացման հնավարությունները և այլն:

XX դարում, հատկապես խորհրդային ներազդեցության և ներկայության պայմաններում, աֆղան կանանց իրավունքների համահավասարեցման շուրջ ձեռնարկվեցին մի շարք քայլեր՝ ինտեգրման, կրթության հավասար հնարավորությունների ընձեռման և այլն, սակայն այդ ձեռքբերումներն տեղային էին, հատուկ միայն քաղաքային միջավայրին: Իսկ 1989 թվականին խորհրդային զորքերի դուրսբերումից, քաղաքացիական պատերազմից, մոջահեդների իշխանության գալուց հետո կանանց և էթնիկ հիմնախնդիրների լուծման հեռանկարը կրկին դարձավ անորոշ:

Բանալի բառեր՝ *Աֆղանստան, հասարակություն, կանանց հիմնախնդիր, գենդերային իրավունքներ, իսլամական արժեհամակարգ, միջէթնիկ հիմնախնդիրներ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դարերի ընթացքում աֆղանական հասարակությունն իր վրա կրել է ներհանրութենական և արտաքին աշխարհաքաղաքական կենտրոնների վարած քաղաքականության ազդեցությունները, որոնց արդյունքում հանրության ներսում ձևավորվել են կլանային մոդելները, էթնիկ տարբերակման այլ գործիքներ, որոնցով էլ պայմանավորված են XX դարում տեղի ունեցան ներհանրութենական փոխազդեցությունները:

Ժամանակակից փուլում հասարակական և էթնիկ գործընթացների ուսումնասիրությանը տրված է կարևորություն և հետազոտական մտքի տիրույթում հակամարտությունները դիտարկվում են ոչ միայն քաղաքական և քաղաքակրթական հարթություններում, այլև հասարակական բազմաշերտ գործընթացների ենթախորքին: Աֆղանստանի և աֆղանական հասարակության կերպափոխությունների շուրջ գիտական քննության առնված բոլոր հիմնահարցերը նաև արդիական են, քանի որ աֆղանական հանրույթի ներսում առկա խնդիրները և դրանց ուղղված միջազգային հետաքրքրությունը ոչ միայն չեն նվազում, այլև շատ առումներով կարևորում ու պայմանավորում են տարածաշրջանային՝ Կենտրոնասիական գոտու անվտանգությունն ու տնտեսական ներդաշնակ զարգացման հեռանկարը:

Ուսումնասիրության նպատակն է աֆղանական հասարակության կերպափոխություններն ուրվագծել էթնիկ և կանանց հիմնախնդիրների ենթախորքին և ցույց տալ վերջիններս ազդեցությունը հասարակական և քաղաքական գործընթացների վրա: Այս նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ բացահայտել միջէնիկ հարաբերությունների կոնֆիգուրացիան և հակամարտության կարգավորման գործընթացում էթնիկ հարաբերությունների կարևորությունը, ուսումնասիրել և քննարկել աֆղանական հասարակական օրգանիզմում կանանց խնդիրները, նրանց գենդերային և քաղաքացիական իրավունակության հիմնահարցերը:

Ուսումնասիրության գիտական նորույթը հիմնավորում ենք նրանով, որ փորձ ենք կատարել գիտատեսական համադրության ենթարկել աֆղանական հասարակության էթնիկ մոդելը և առանձնացնել կանանց հիմնախնդիրները՝ որպես էթնոտարածաշրջանային հակամարտության էթնո-ազգային նախադրյալները բացահայտելու և այն հաղթահարելու միջոց:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացված է պատմագիտությանը և այլ գիտակարգերին հատուկ մեթոդաբանությամբ, կիրառված են պատմահամադրական, համապարփակ վերլուծության և ընդհանրացման մեթոդական գործիքները, որոնք հնարավորություն են տալիս լավագույն բացահայտելու էթնիկական և կանանց հիմնախնդիրները, նախանշել հնարավոր լուծումների հեռանկարները: Հետազոտություն իրականացվել է օբյեկտիվության, պատմականության և բազմագործոն վերլուծության սկզբունքներին համապատասխան, ինչը հնարավորություն է տալիս պատմական երևույթներն ու գործընթացները դիտարկել դրանց պատմական զարգացման ենթախորքին: Աֆղանական հասարակության էթնիկ և ազգայնական գործընթացները ներկայացված են տվյալ ոլորտի առաջատար տեսաբաններ Է.Սմիթի, Է.Հաբսբաումի աշխատությունների ուսումնասիրության հիման վրա:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Էթնիկ հիմնախնդիրները սառը պատերազմի համատեքստում

Ժամանակակից Աֆղանստանի պատմությունը ուղղակի և անուղղակի բազմաթիվ թելերով կապված է էթնիկական գործընթացների հետ, քանի որ այս երկրի պատմության ճգնաժամանային գրեթե բոլոր ժամանակներն ունեցել են էթնիկական բովանդակություն կամ էլ էթնիկ խմբերը հիմնական դերակատարներին ծառայել են որպես միջոց:

Աֆղանստանում ազգային հարցը հանդիսանում է որոշիչ գործոն, որով պայմանավորված՝ ավելի են բարդանում երկրի սոցիալ-քաղաքական կյանքում առկա պայթունավտանգ իրավիճակները: Աֆղանստանում ներպետական խնդիրների ծագում են պետության բազմազգ բնույթից, որում ավանդաբար գերիշխող դեր է խաղում փուշթունյան ավատատիրական ազնվականությունը, պետական կառուցվածքի առանձնահատկություններից և անկատարությունից, երկրի տնտեսական և քաղաքական կյանքում այլէթնիկ տարրերի առկայությունից, հիմնական էթնիկ խմբերի հարաբերություններից և այլն:

Վերջին երկու հարյուր տարվա ընթացքում աֆղանական հասարակությունը գաղութատիրական, ապա նեոգաղութատիրական տերությունների քաղաքականության հետևանքով չկարողացավ զարգացնել և հասունացնել էթնիկ ինքնագիտակցությունը, այն ընդհանրություններն ու արժեքները, որոնք հատուկ են մեր ժամանակների ազգերին, գրեթե

բացակայում են աֆղանական էթնիկ հանրույթի ներսում: Ըստ որոշ տեսաբանների աֆղանական հանրույթի բնորոշ են «պրոտո-ազգային» տարրեր և հատկանիշներ, ինչը Հոբսբաումի կողմից բացատրվում է հետևյալ կերպ. «Ազգային պատկանելիությունը մարդկանց միավորում է մեծ տարածքներում, նույնիսկ երբ ցրված են և չունեն բևեռականություն» (Hobsbawm, 1992): Այս հայեցակարգը համադրել է Էնթոնի Սմիթի նախաազգային տեսության հետ, որտեղ ըստ հեղինակի կարևորվում են «ընդհանուր մշակույթի տարրերը, որոշ կապերը պատմական տարածքի հետ և որոշակի համերաշխության առկայությունը՝ առնվազն իրենց էլիտաների հետ» (Smith, 1995, p. 57):

Կարծում ենք՝ ազգային ընդհանրությունների բացակայությունը, ազգային ինքնության ձևավորման գործընթացի արտաքին ազդեցությունները կանխարգելեցին աֆղանական հանրության համախմբման և ընդհանրացման խնդիրը: Սառըպատերազմյան քաղաքականությունը ևս կանխարգելեց այս գործընթացին և այն ազգաստեղծման նեոգաղութատիրական ծրագրերն ըստ էության չունեին իրականություն դառնալու որևէ հնարավորություն: Ըստ նույն Է. Հոբսբաումի՝ ժամանակակից ազգությունների ձևավորման գործընթացում կարևոր են ոչ թե ազգային ինքնորոշման գաղափարներն ու գործընթացները, այլ երեք գործոններ՝ ապագաղութացում, հեղափոխություն և արտաքին ուժերի միջամտություն: Այս հանգամքը կարևոր է այնքան, թե հասարակ քաղաքացին իրեն դիտարկում է որպես ազգության մաս, կիսում է պետական գաղափարախոսությունները, ինքնութենական ընդհանրությունները:

Սառը պատերազմի առաջին շրջանում ԱՄՆ և Խորհրդային Միությունը փորձեցին «տնտեսական հարձակմամբ» ապահովել իրենց աշխարհաքաղաքական դիրքերն Աֆղանստանում, իսկ վերջում այն վերածվեց պետության և նրա մասերին նկատմամբ վերահսկողություն ունենալու պայքարի, որոնց հակադիր պայքարող կողմեր դարձան նույն աֆղանները՝ մի կողմից խորհրդային զորքերի հետ, մյուս կողմից՝ ԱՄՆ-ի կողմից աջակցվող մոջահեդների:

Խորհրդային և ամերիկյան սառըպատերազմյան քաղաքականության հաջորդ ասպեկտը գաղութային վերնախավի ստորդասումն էր, դրա վառ օրինակը Քաբուլի էլիտան էր, որը ենթարկվում էր գերտերությունների քաղաքական ու տնտեսական նախապատվություններին (Reed, 2010): Խորհրդային կողմն իր ներկայության ժամանակաշրջանում նախապատվություն էր տալիս էթնիկ փոքրամասնությունների այն ներկայացուցիչներին (տվյալ պարագայում տաջիկներին, ուզբեկներին), որոնք հարմարվում էին իրենց քաղաքականության առաջնահերթություններին:

Չնայած բոլոր այս հանգանքներին, միջէթնիկ հարաբերությունները խորհրդային զորքերի մուտքի հետ ավելի ցայտուն դրսևորվեցին: 1979 թվականի հեղափոխությունն ուղղակի

ազդեցություն ունեցավ միջէթնիկ և միջկլանային հարաբերությունների վրա՝ խարխլելով աֆղանական ավանդական էթնիկ բուրգը (Туронок & Эбади, 1997):

Կրոնա-քաղաքական լրջագույն տեղաշարժեր գրանցվեցին նաև ազգագրական երկրամասերում, օրինակ շիա հազարաներով բնակեցված Հազարաջաթում ձևավորվեցին ազգային-կրոնական կազմակերպություններ, որոնց գործունեության արդյունքում 1979 թ-ի ամռանն այս տարածաշրջանը գրեթե ամբողջությամբ դուրս եկավ կենտրոնական իշխանությունների ենթակայությունից և տեղում ձևավորվեցին իշխանության մարմիններ՝ տեղի կրոնա-քաղաքական ընտրախավի գլխավորությամբ: Նույն թվականի օգոստոսին Հազարաջաթում «Աֆղանստանի իսլամական ռազմիկների միության» գլխավորությամբ հռչակվեց «իսլամական հանրապետության անկախությունը»: Հազարաջաթում իշխանության փաստացի պատկանում էր «Իսլամական խորհրդին», որի կազմում ներառված էին մի քանի քաղաքական խմբերի ներկայացուցիչներ:

Նույնատիպ գործընթացներ սկսվեց նաև նուրիստանցիների շրջանում, որոնք ևս չէին ճանաչում պաշտոնական Քաբուլի իշխանությունը: Ինչպես նշում է արևելագետ Յու. Բոսինը՝ Աֆղանստանի դեմ առաջին անգամ ջիհադը հայտարարվեց 1978 թ-ին Նուրիստան նահանգում, որի տարածքը նվաճվել և բնակչությունը ենթարկեցվել էր միայն 19-րդ դարի վերջին (Босин, 2002):

Աֆղանական իշխանությունների դեմ կազմակերպված ապստամբական զինված շարժումները ղեկավարվում էին Պակիստանում հաստատված Աֆղանստանի իսլամական ու Աֆղանստանի իսլամական հասարակություն կուսակցությունները, որոնց ֆինանսական և կազմակերպական ռեսուրսներն ապահովում էին իսլամական երկրների և Արևմուտքի (ԱՄՆ, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլն) կողմից (Van Vleck, 2009): Սառըպատերազմյան քաղաքականության ֆոնին՝ աֆղանական հասարակության շրջանում ԱԺԴԿ-ի (իմա՝ Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցություն) վարչակարգի հեղինակության անկումն ու նրանց իշխանության նկատմամբ հակադրությունը հանգեցրեց «դաշտային հրամանատարների» ֆենոմենի առաջացմանը: Աֆղանստանի բազմաթիվ շրջաններում իշխանություն անցավ ընդդիմության առաջնորդներին, ինչպիսիք են Ահմադ Շահ Մասուդը (Փանջշերի հովիտ), Իսմայիլ Խանը (Հերաթի նահանգ), Մուլլա Մալանգը (Քանդահար), Բասիրը (Բադախշան), Սաիդ Ջագրանը (Ղազնի), Ջալալեդդին Խաքանին և ուրիշներ:

Միևնույն ժամանակ պետք է ընդգծել, որ ձևավորվեցին առանձին անկլավային շրջաններ, որտեղ ինչպես պաշտոնական իշխանությունը, այնպես էլ ընդդիմությունը չունին իշխանության որևէ դրսևորում: Ձևավորվեց իշխանության վակուում, որի ուղղությամբ տարված և տարվող աշխատանքները լիարժեք արդյունավետություն չունեցան: Սառըպատերազմյան քաղաքականության արդյունքում Աֆղանստանում ավելի խորացան միջէթնիկ խնդիրները, չձևավորվեց հասարակական համերաշխության միջավայր, որի արդյունքում երկիրը մինչ այժմ

գտնվում է նմանատիպ իրավիճակում: Աֆղանագետ Ռոբերտ Նիքոլսի բնորոշմամբ՝ աֆղանական խնդիրներին ավելի խորագիտակ լինելու համար առաջին հերթին պետք է ուսումնասիրել «ազգային առանձնահատկությունները» (Nichols, 2005): Եթե ամբողջացնենք, ապա կարող են եզրակացնել, որ սառըպատերազմյան էտապում գերտերությունների վարած քաղաքականության արդյունքում ոչ միայն տուժեց Աֆղանստանի հասարակական-քաղաքական կյանքը, այլև անդառնալի հետևանքներ ունեցավ միջէթնիկ հարաբերությունների վրա, ինչը չնպաստեց, այլև կանխարգելեց աֆղանական հասարակության պրոտո-ազգության մակարդակային աճը դեպի ազգություն:

Կանանց հիմնախնդիրը

Աֆղանստանում կանանց խնդիրը կամ գենդերային իրավահավասարության բացակայությունը դարերի պատմություն ունի: Այն ոչ թե պայմանավորված է այս կամ այն իշխանության քաղաքական հայացքներով, այլ կրոնական գրքերի և կանոնների և իսլամի գերարմատավորմամբ: 20-րդ դարում մի շարք փորձեր կատարվեցին բարելավելու կանանց խնդիրները, ինչը հանդիպեց ավանդապահ հասարակության, կրոնական վերնախավի դիմադրությանը, ինչի արդյունքում այս հարցը մարգինալացվեց: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ կանանց խնդիրը միայն ներաֆղանական չէ, այն պայմանավորված է բազմագործոն ներազդեցությամբ և արտաքին քաղաքական գործընթացները ևս իրենց դերակատարումն ունեն այս հարցում:

Պատմականորեն կանանց հիմնախնդիրը հանդիսացել է աֆղանական հասարակության հիմնական հարցերից մեկը, ավանդական համայնքային խնդիրներից մեկը՝ պայմանավորված հասարակական հարաբերությունների հայրիշխանական բնույթով և կենտրոնացված պետության առկայությամբ (Moghadam, 2014): 1920-ական թվականների կանանց իրավունքների և մոդեռնիստական կնոջ աֆղանական կերպար ձևավորելու շուրջ ստեղծվեց հանրային դիսկուրս, չնայած որ էթնիկ ծայրամասերը դիմադրությամբ դիմավորեցին կանանց իրավունքների մասին խոսույթը: Կանանց իրավունքների արծարծումը, հարսնացուների գնի վերացումը և ազատ ընտրության իրավունքը կլանային համակարգում շրջանում դիմավորվեց որպես սոցիալական կարգավիճակի, ընտանեկան արժեհամակարգի վերահսկողության և ֆինանսական ապահովության կորուստ, անգամ քննարկումներ իրականացվեցին Լոյա Ջիրգայում: Հետագայում Ամանուլլահ խանը ստիպված էր հետ կանգնել իր որոշումներից. Քաբուլում և գյուղական վայրերում աղջիկների համար բացված դպրոցները փակվեցին, իսկ կանայք ստիպված էին կրկին գլխաշոր կրել: Ըստ որոշ ուսումնասիրողների՝ վերջինիս արդիականացման կուրսը առաջադիմական էր, սակայն ոչ ընկալելի աֆղանական ավանդական հասարակության կողմից (Gregorian, 1969):

Հետագայում միայն 1950-ական թվականներին որոշակի փորձեր կատարվեցին կրկին ապահովելու կանանց իրավունակությունը, ինչ պայմանավորված էր տնտեսության մեջ կանանց դերակատարության մեծացմամբ: Մասնավորապես տեխնոլոգիական տնտեսությանն անհրաժեշտ էին բազմապրոֆիլ մասնագետներ և շուտով աշխատաշուկայում հանդիպում ենք կանանց, ովքեր աշխատում էին որպես բուժքույրեր, բժիշկներ ու ուսուցիչներ: 1964 թվականի սահմանադրությամբ կանաչ լույս վառվեց նաև կանանց քաղաքական և քաղաքացիական իրավունքների ապահովման տեսանկյունից. այլևս կանայք կարող էին ընտրել և ընտրվել, ինչը բավական առաջադիմական երևույթ էր տվյալ ժամանակի Արևելքի համար: ԱԺԴԿ-ի հիմնադրումից հետո նրա կազմում սկսեցին անդամագրվել կանայք, որոնք անգամ առանձին կառույց ձևավորեցին՝ «Աֆղան կանանց դեմոկրատական կազմակերպությունը» (Ahmed-Ghosh, 2003), որի նպատակը կանանց գենդերային իրավունքների սահմանումն էր՝ անգրագիտություն վերացումը, հարկադիր ամուսնությունների արգելքը, հարսնացուների վաճառքը և այլն: Նմանատիպ ծրագրեր իրականացրին նաև ամերիկացիները, որոնք Աֆղանստանի «Արիանա» ազգային ավիաընկերության հիմնադրման զուգընթաց փորձեցին նպաստել Աֆղանստանի մշակութային նորմերի փոփոխությանը՝ աֆղան կանանց համար կարի դասեր, արևմտյան նորաձևության ցուցադրություններ կազմակերպելով ու խրախուսելով չադրայի հանումը (Van Vleck, 2009): Կարծում ենք, որ նման միջոցառումները ընդամենը հասարակության վերաբերմունքն իրենց նկատմամբ բարելավելու, փափուկ ուժի գործադրման միջոցներ էին:

Արդեն 1970-ական թվականների նկատում ենք կանանց, որոնք դերակատարում ունեն բարձրագույն կրթական համակարգում՝ բուհերի դասախոսական կազմում, պետական կառույցներում ու խորհրդարանում: ԱԺԴԿ-ի և ռուսական զորակազմի ներակայության շրջանում ևս շարունակվեց կանանց իրավունքների հավասարեցման գործընթացը, որը, ինչպես 1920-ական թվականների բարեփոխումները, հանդիպեցին մահմեդական հոգևորականության և ցեղային ու կլանային առաջնորդների բուռն հակազդեցությանը: Բնականաբար հակադրությունն արտահայտվեց նաև գործնական կիրառությամբ՝ կին գործիչների սպանությամբ, ոտնձություններով և այլն, ինչպես բնորոշում է Մարսեդեն՝ ԱԺԴԿ-ի փոփոխությունների փաթեթը «հանգեցրեց գյուղական բնակչության բուռն արձագանքին» (Marsden, 2002):

Խորհրդային զորքերի հայտվելուց հետո ԱԺԴԿ-ն սկսեց համալիր բարեփոխումներ իրականացնել կանանց իրավահավասարության շուրջ, բայց ժամանակը և պատերազմական իրականությունը ստվերեցին գործընթացի արդյունավետության նշույլները, իսկ երկարատև պատերազմական զարգացումները հանգեցրին երկու իրարամերժ զանգվածի՝ գյուղական, որպես ավանդույթի և իսլամական արժեհամակարգի կրող, և քաղաքային՝ որպես նոր, բայց գաղութային (խորհրդային) արժեհամակարգի կրող, ձևավորմանը: Կրկին կանանց դերը բավականի մեծ էր

հանրային համակարգում՝ համալսարաններում, կրթական, պետական ու առողջապահական հաստատություններում:

Սառը պատերազմյան քաղաքականության կողմերը օգտագործեցին նաև Աֆղանստանում կանանց իրավունքների և իրավահավասարության բացակայության խնդիրը և, եթե խորհրդային կողմը փորձում էր իր մոդելի կիրարկմամբ շահագրգռել աֆղան կանանց, հակառակ կողմից հովանավորվող մոջահեդները հանդես էին գալիս «սրբազան պատերազմի» մարտիկների դիրքերից՝ հանուն իսլամի, ընդդեմ կոմունիստական հարձակման, ավանդական մշակույթի և ցեղային համակարգի:

1989 թվականին, երբ խորհրդային զորքերը դուրս եկան Աֆղանստանից և երկիրը հայտնվեց քաղաքացիական պատերազմի թատերաբեմում, մոջահեդների գաղափարական պայքարն ավելի ցայտուն դրսևորվեց, ինչի արդյունքում կարողացան հաստատել իրենց իշխանությունն ու հեռացնել ոչ աֆղանական, ընդդեմ իսլամի արժեքներ կրող կառավարության ու նրանց համակարգը: Թալիբանի կառավարման շրջանում կանանց իրավունքների մասին խոսք լինել չէր կարող (Каримжанова, 2017), վերջիններս հասարակության մեջ կարող էին հայտնվել միայն ամբողջությամբ ծածկված, իսկ կրթության, աշխատանքային իրավունքները չեղարկվեցին (Окимбеков, 2023):

Այսպիսով, աֆղան կանանց կարգավիճակը բարելավելու նպատակով ձեռնարկված փորձերը ոչ միայն չհաջողվեցին, այլև ավելի սրեցին պայքարը կանանց հնարավոր իրավահավասարության նկատմամբ՝ հանգեցնելով հետագա կառավարությունների բուռն, ֆունդամենտալիստական արձագանքների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սառը պատերազմյան քաղաքականությունը խաթարեց աֆղանական հասարակության զարգացման էվոլյուցիան, այն արտաքին խոչընդոտներն ու մարտահրավերները, որոնք ծառացան աֆղանական հասարակության առջև, ըստ էության չարժանացան համարժեք պատասխանների, որի համար էլ աֆղանական հանրույթը ենթարկվեց արտաքին գաղափարական ինկուբացիայի, որը և խաթարեց հասարակական կառույցի զարգացման օրինաչափությունները: Ցեղային-կլանային հարաբերությունները դարերի ընթացքում ինտիտուցիոնալ բնույթ հաղորդեցին տոհմացեղային գերակայությանը՝ ուղիղ խոչընդոտ հանդիսանալով աֆղանական պետականաշինության, կենտրոնացված պետականության գործառույթների իրացման համար: Աֆղանական հանրույթին բնորոշ են «պրոտո-ազգային» տարրեր և հատկանիշներ, որոնց նկատմամբ սառըպատերազմյա քաղաքականությունն ունեցել է արմատական ազդեցություն՝ ինստիտուտալիզացիայի

ենթարկելով էթնիկ սահմաններն ու հարաբերությունները, կանխարգելելով աֆղանական էթնիկ ինքնութենական ընդհանրացման հնարավորությունները:

2. Թեև կանանց խնդիրը մշտապես ներկա է եղել աֆղանական հանրային դիսկուրսում, բայց այս խնդիրը ևս արմատավորվեց սառըպատերազմյա ժամանակաշրջանում, երբ խորհրդային քաղաքական համակարգի կրկնօրինակմամբ կանանց տրվեցին քաղաքական ու քաղաքացիական իրավունքներ, իսկ խորհրդային զորքերի դուրսբերումից և թալիբանի իշխանության հաստատումից հետո կանանց իրավունակության խնդիրը կրկին դարձավ առաջնային: Ֆունդամենտալիստական շարժումներն ու նրանց առաջնորդները կանանց և նրանց իրավունքները գնահատում էին միայն իսլամի և սուրբ գրքերի արժեհամակարգով և այն ազատությունները, որ ընկալելի են համաշխարհային հասարակության համար, ըստ էության անհասանելի դարձան աֆղան կանանց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Босин, **Ю**. **В**. (2002). *Афганистан: полиэтническое общество и государственная власть в историческом контексте*. М.: Гуманитарий.

Каримжанова, **Г. К**. (2017). *О положении женщин или" гендерный вопрос" в Афганистане. Из истории к настоящему. International scientific review*, 6(37).

Окимбеков, **У**. **В**. (2023). Женский вопрос в Афганистане при талибах. *Россия и мир: научный диалог*, (2).

Туронок, **С**., & **Эбади**, **Х**. (1997). *Афганский конфликт:* социокультурное измерение. *Центральная Азия и Кавказ*, (10).

Ahmed-Ghosh, H. (2003). A history of women in Afghanistan: lessons learnt for the future or yesterdays and tomorrow: women in Afghanistan. *Journal of international Women's Studies*, *4*(3).

Gregorian, V. (1969). *The emergence of modern Afghanistan; Politics of Reform and modernization, 1880-1946*. Stanford University Press.

Hobsbawm, E. J. (1992). *Nations and nationalism since 1780: Programme, myth, reality*. Cambridge university press.

Marsden, P. (2002). *The Taliban: war and religion in Afghanistan*. New Africa Books.

Moghadam, V. M. (2014). Nationalist Agendas and Women’s Rights Conflicts in Afghanistan in the Twentieth Century. In *Feminist nationalism* (pp. 75-100). Routledge.

Nichols, R. (2005). Afghan Historiography: Classical Study, Conventional Narrative, National Polemic. *History Compass*, *3*(1).

Reed, J. (2010). Neocolonialism in Cold War Afghanistan. *Middle Eastern Communities and Migration Student Research Paper*.

Smith, A. (1995). Nations and nationalism in a global era. Cambridge: Polity Press.

Van Vleck, J. (2009). An airline at the crossroads of the world: Ariana Afghan Airlines, modernization, and the global Cold War. *History and Technology*, *25*(1).

Valenta, J. (1980). From Prague to Kabul: The Soviet Style of Invasion. *International Security*, *5*(2).

REFERENCE LIST

Bosin, YU. V. (2002). Afganistan: polietnicheskoe obshchestvo i gosudarstvennaya vlast' v istoricheskom kontekste *(Afghanistan: Multi-Ethnic Society and State Power in Historical Context).* M.: Gumanitarij.

Karimzhanova, G. K. (2017). O polozhenii zhenshchin ili" gendernyj vopros" v Afganistane. Iz istorii k nastoyashchemu *(On the Status of Women or the "Gender Question" in Afghanistan. From History to the Present). International scientific review*, 6(37).

Okimbekov, U. V. (2023). ZHenskij vopros v Afganistane pri talibah *(Women's Issue in Afghanistan under the Taliban).* Rossiya i mir: nauchnyj dialog, (2).

Turonok, S., & Ebadi, H. (1997). Afganskij konflikt: sociokul'turnoe izmerenie (*The Afghan conflict: socio-cultural dimension)*. Central'naya Aziya i Kavkaz, (10).

Ahmed-Ghosh, H. (2003). A history of women in Afghanistan: lessons learnt for the future or yesterdays and tomorrow: women in Afghanistan. *Journal of international Women's Studies*, *4*(3).

Gregorian, V. (1969). *The emergence of modern Afghanistan; Politics of Reform and modernization, 1880-1946*. Stanford University Press.

Hobsbawm, E. J. (1992). *Nations and nationalism since 1780: Programme, myth, reality*. Cambridge university press.

Marsden, P. (2002). *The Taliban: war and religion in Afghanistan*. New Africa Books.

Moghadam, V. M. (2014). Nationalist Agendas and Women's Rights Conflicts in Afghanistan in the Twentieth Century. In *Feminist nationalism* (pp. 75-100). Routledge.

Nichols, R. (2005). Afghan Historiography: Classical Study, Conventional Narrative, National Polemic. *History Compass*, *3*(1).

Reed, J. (2010). Neocolonialism in Cold War Afghanistan. *Middle Eastern Communities and Migration Student Research Paper*.

Smith, A. (1995). Nations and nationalism in a global era. Cambridge: Polity Press.

Van Vleck, J. (2009). An airline at the crossroads of the world: Ariana Afghan Airlines, modernization, and the global Cold War. *History and Technology*, *25*(1).

Valenta, J. (1980). From Prague to Kabul: The Soviet Style of Invasion. *International Security*, *5*(2).

РЕЗЮМЕ

ИЗМЕНЕНИЯ В АФГАНСКОМ ОБЩЕСТВЕ В XX ВЕКЕ

(ЭТНИЧЕСКИЕ И ЖЕНСКИЕ ПРОБЛЕМЫ)

ВЛАДИМИР ПОГОСЯН

Этнические и женские проблемы в современном Афганистане являются индикаторами определяющих изменений в обществе и дают возможность проиллюстрировать видение отношений и возможных решений, которые были бы адекватны нынешним мировым стандартам общественных отношений.

Статья посвящена изучению этнических и женских проблем афганского общества, в которой была предпринята попытка всестороннего изучения прямого и косвенного влияния глобальных процессов, происходивших в XX веке, на эти две основные проблемы афганского общества.

Объектом исследования является афганское общество, а предметом-этнополитические и женские проблемы в контексте многомерных внешних и внутренних процессов XX века. Цель исследования состоит в том, чтобы выделить изменения в афганском обществе в рамках этнических и женских проблем и показать влияние последних на процессы в общественной среде.

В статье всесторонне рассматриваются "национальные особенности" Афганистана, призма клановых и межрасовых отношений, влияние внешних игроков на этнические процессы, изменение религиозно-национальной среды, ориентация национальных меньшинств на идентичность и другие вопросы. Рассматривается роль женщин в Афганистане, архетипы их социальной интеграции, включения в общественную работу, реализации высшего образования и т. д.

В XX веке, особенно в условиях советского влияния и присутствия, был предпринят ряд шагов по обеспечению равных прав афганских женщин, таких как интеграция, предоставление равных возможностей в образовании и т. д., но эти достижения были локальными, характерными только для городской среды. А после вывода советских войск в 1989 году, гражданской войны, прихода моджахедов к власти перспектива решения проблем женщин и этнических проблем снова стала неопределенной.

Ключевые слова: Афганистан, общество, женский вопрос, гендерные права, исламская система ценностей, межэтнические проблемы.

ABSTRACT

CHANGES IN AFGHAN SOCIETY IN THE 20TH CENTURY

(ETHNIC AND WOMEN'S ISSUES)

VLADIMIR POGHOSYAN

Ethnic and women's issues in nowadays Afghanistan are indicators of decisive changes in society and allow us to visualize the vision of relations and possible solutions that would be adequate to the current international standards of public relations.

The article is devoted to the study of ethnic and women's problems of Afghan society, in which an attempt was made to comprehensively study the direct and indirect impact of global processes taken place in the 20th century on these two main problems of Afghan society.

The object of the study is Afghan society, with the subsequet ethnopolitical and women's issues within the context of multidimensional external and internal processes of the 20th century. The purpose of the study is to outline the transformation of Afghan society in the context of ethnic and women's issues and to show the influence of the latter on processes in the social environment.

Added to this the article comprehensively discusses the "national characteristics" of Afghanistan, the prism of clan and race relations, the influence of external actors on ethnic processes, changes in the religious and national environment, the orientation of national minorities to identity and other issues.

Finally, in the 20th century, especially under the conditions and of Soviet influence, a number of steps were taken to ensure equal rights for Afghan women, such as integration, equal educational opportunities, etc., but these achievements were local, characteristic only of the urban environment. After the withdrawal of Soviet troops in 1989, the civil war, and the Mujahideen's rise to power, the prospect of solving women's and ethnic problems became uncertain again.

Keywords: Afghanistan, society, women's issue, gender rights, Islamic value system, interethnic problems.

Հոդվածը ստացվել է՝ 27.08. 2024

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 07.09. 2024